

Եւ մարեց մէջն օգոստոսի արեւն հուր
 Օձն այդ ծարաւ արտօսրի:
 Յետոյ շըջաց ու նոր օղակ մ'ընելով
 Շուրջը վըզիս՝ գայն սեղմեց.
 Մինչեւ պոչն իր նո՛ր քաղցով ետեւը ճօճուն՝
 Կը ջախջախեր քար մը մեծ:
 Քընթըննոցներն ամփոփելով իրար մէջ՝
 Կոկորդըս պինդ պըրկեցին,
 Ու ես վայրկեան մ'ըզգացի մէջըս փակուած
 Չորս ճամբաները կեանքին:
 Եւ ունչերես ու աչքերես բըխեցաւ
 Արիւնըս դուրս սորսորուն,
 Եւ ըզգացին, կարծես, շըրթունքըս դողդոջ
 Սըրտիս ամբողջ ջերմութիւնն:
 Իսկ ան յեցած կըզակն ուղիղ կըզակիս
 Խըմե՛ց արիւնս անդեղեայ:
 Մէն մի կըլլուած շիթ, որ կ'իջներ՝ կը զգայի
 Իր մարմնոյն մէջ, մարմնոյս վրայ:
 Ինչպէս շողերը արեւուն կը սուզին
 Յին ջրհորներուն մէջ ցամբած՝
 Ա՛յսպէս կարծես երակներս իմ քամուեցան
 Որկորէն վար թըխպամած:
 Կըշտացած էր. վիզես, մէջքես, ծունկերես
 Լուծեց օղերն յամրաբար,
 Միշտ յիշատակն իր օձ-ձեւին թողելով
 Շուրջն իրանիս դալկահար:
 Կըշտացած էր իմ արցունքով, արիւնով...
 Ա՛լ, զերդ ոճիր կենդանի,
 Արփւոյն ներհակ, միշտ այդ կարմիր ճամբայէն՝
 Ան կ'իջներ, ես կ'ելլա՛յի...